# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 սեպտեմբերի 2024 թվական, N 111-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքի տեղական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 16. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., սեպտեմբերի 13,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ

# ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

# ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2024 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

2022 թվականին համայնքների խոշորացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեցին համայնքների փնջեր, այդ թվում Ալավերդի խոշորացված համայնքը, որի փնջի կազմում ընդգրկված բնակավայրերն են քաղաք Ալավերդին (այդ թվում՝ Ակներ, Սանահին, Մադան գյուղական թաղամասերը), Աքորի, Կաճաճկուտ, Հաղպատ, Ծաղկաշատ, Ջիլիզա, Ախթալա, Առողջարանին կից գյուղ, Բենդիկ, Ճոճկան, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում, Նեղոց, Շնող, Թեղուտ, Քարկոփ, Օձուն, Ամոջ, Այգեհատ, Արևաձագ, Արդվի, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հագվի, Մղարթ բնակավայրերը: Համայնքի կենտրոն է հանդիսանում Ալավերդի քաղաքը:

Ալավերդին գտնվում է Լոռու մարզում և հանդիսանում է տարածաշրջանի խոշոր արդյունաբերական կենտրոններից մեկը: Համայնքն ունի՝

- Կրթական հաստատություններ՝ դպրոցներ, քոլեջներ
- Մշակութային կենտրոններ՝ թանգարաններ, գրադարաններ
- Պատմամշակութային վայրեր
- Առողջապահական հաստատություններ
- Սպորտային կառույցներ
- Տրանսպորտային հանգույց՝ երկաթուղային կայարան

Վերջին տասնամյակներում նկատվել է բնակչության թվի նվազման միտում՝ պայմանավորված արտագաղթով և ծնելիության նվազմամբ:

Հայաստանի ընդհանուր ժողովրդագրական վիճակագրության մասնավորեցմամբ՝ Ալավերդի խոշորվացված համայնքում երիտասարդները կազմում են բնակչության մոտ 20-25%-ը:

### Երիտասարդների զբաղվածություն

- Ուսանողներ՝ մոտ 30-35%
- Աշխատող երիտասարդներ՝ 40-45%
- Գործազուրկներ՝ 20-25%

### Աշխատող երիտասարդների ոլորտային ներգրավվածություն

- Արդյունաբերություն (հատկապես լեռնահանքային)
- Ծառայությունների ոլորտ
- Կրթություն
- Առևտուր
- Զբոսաշրջություն

### Զբաղվածության ապագա միտումներ

- SS ոլորտի զարգացում
- Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի աճ

- Փոքր և միջին ձեռնարկատիրության խթանում

Տվյալները վերցվել են ստորև նշված աղբյուրներից և հիմնականում արտացոլում են Հայաստանի ընդհանուր ժողովրդագրական և ցուցանիշների պատկերը:

1. ՀՀ Վիճակագրական կոմիտե - https://www.armstat.am
2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - https://www.mlsa.am
3. Լոռու մարզպետարան - http://lori.mtad.am
4. Ալավերդու համայնքապետարան - http://alaverdi.am

**ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ և ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ.**

Ստորև ներկայացված խնդիրներն ու մարտահրավերները հիմնված են Ալավերդու խոշորացված համայնքի երիտասարդների սոցիալական վիճակի վերլուծության վրա, որի նպատակն է եղել բացահայտել երիտասարդների հնարավորությունները սահմանափակող գործոնները: Վերլուծությունը մեթոդաբանությունը ներառում է ֆոկուս-խմբային քննարկումներ և իրավական փաստաթղթերի վերլուծություն (տե՛ս Մեթոդաբանություն բաժինը):

**Կրթություն**: Բազմաթիվ երիտասարդներ համալսարանական կրթություն ստանալու նպատակով մեկնում են Երևան կամ այլ մեծ քաղաքներ, սակայն ոչ բոլորն են վերադառնում: Տեղական կրթական հաստատությունները շատ դեպքերում գործունեության սահմանափակ հնարավորություններ ունեն, մասնավորապես նորարար ծրագրեր ներգրավելու և իրականացնելու առումով: Երիտասարդների համար սահմանափակ են կրթական և մասնագիտական զարգացման հնարավորությունները, ներառյալ ոչ ֆորմալ կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրերը:

Գյուղական բնակավայրերում կա կրթական ծրագրերի սահմանափակ հասանելիություն: Կա նաև պետության կողմից համակարգված աջակցության բացակայության խնդիրը, ինչը սահմանափակում է հաջողված նախագծերի մասշտաբավորման հնարավորությունը:

Կրթության շրջանակներում հիմնականում փափուկ հմտությունների ուսուցման համակարգված մոտեցման բացակայությունն է: Շատ կրթական հաստատություններ դեռևս կենտրոնանում են ակադեմիական առարկաների վրա՝ թողնելով փափուկ հմտությունների զարգացումը: Բացի այդ, կան ռեսուրսների սահմանափակումներ, ինչպիսիք են որակավորված մարզիչները և անհրաժեշտ նյութերի հասանելիությունը:
Շատ բնակիչներ դեռ չեն հասկանում մեդիագրագիտության կարևորությունը, որը պահանջում է լրացուցիչ տեղեկատվական արշավներ: Բացի այդ, մեդիագրագիտությունը դեռևս արժանի տեղ չի զբաղեցնում ֆորմալ կրթության ուսումնական ծրագրերում, ինչը սահմանափակում է դրա տարածումը երիտասարդների շրջանում:

Շատ կրթական ծրագրեր մնում են հնացած և չեն բավարարում արագ փոփոխվող տնտեսական լանդշաֆտի կարիքները: Դպրոցների, համալսարանների և պոտենցիալ գործատուների միջև փոխգործակցության բացակայություն կա, ինչը դժվարացնում է ուսանողներին իրական աշխատանքային պայմաններին նախապատրաստելը: Այս ամենի ֆոնին դուրս է մնում քաղաքացիական կրթությունը. քաղաքացիական կրթությունը հաճախ սահմանափակվում է տեսական ասպեկտներով՝ առանց բավարար ուշադրություն դարձնելու գիտելիքների գործնական կիրառմանը:

Սահմանափակ ռեսուրսների և տարբեր կամավորական խմբերի և պետական կառույցների միջև համակարգման բացակայությունը և բացի այդ, քաղաքացիական ներգրավվածության բարձրացմանն ու երիտասարդների շրջանում կամավորության խթանմանը միտված կրթական ծրագրերի բացակայությունը հետ է պահում կամավորական շարժման աճը:

**Մշակութային և ժամանցային հնարավորություններ:** Համայնքում՝ հատկապես գյուղական փոքր բնակավայրերում, քիչ են ժամանցի և մշակութային կենտրոնները, ինչը սահմանափակում է նրանց ազատ ժամանցի և անձնային զարգացման հնարավորությունները:

Չնայած ստեղծագործական նախաձեռնություններին երիտասարդների ակտիվ մասնակցությանը՝ կան խնդիրներ՝ կապված ինքնադրսևորման ռեսուրսների և հարթակների բացակայության հետ: Տեղական մշակութային հաստատությունները հաճախ բախվում են սահմանափակ ֆինանսավորման, ինչը դժվարացնում է կանոնավոր միջոցառումներ կազմակերպելը և երիտասարդ տաղանդներին աջակցելը: Բացի այդ, չկան բավարար ենթակառուցվածքներ, ինչպիսիք են ձայնագրման ստուդիաները կամ արվեստի տարածքները, որտեղ երիտասարդները կարող են զարգացնել իրենց հմտությունները:
Համայնքում բացակայում են ժամանակակից կինոթատրոնները, ժամանցի կենտրոնները և արվեստի տարածքները, որտեղ երիտասարդները կարող են ժամանակ անցկացնել:

Էական խնդիր է նաև մշակութային վայրերի զարգացման և պահպանման համար ֆինանսական միջոցների բացակայությունը: Շատ մշակութային ծրագրեր և միջոցառումներ կախված են տեղի ակտիվիստների ոգևորությունից և սահմանափակ դրամաշնորհներից, ինչը դժվարեցնում է դրանց կանոնավոր կազմակերպումը:

Շատ երիտասարդներ որոշում են արտագաղթել՝ ավելի լավ կյանքի պայմաններ փնտրելով, ինչը բացասաբար է անդրադառնում համայնքի զարգացման վրա՝ հանգեցնելով բնակչության կրճատմանը:

**Տնտեսական զարգացում:** Երիտասարդների համար Ալավերդի խոշորացված համայնքում աշխատանք գտնելը դժվար է: Համայնքում գործազրկության բարձր մակարդակը հանգեցնում է նրան, որ շատ երիտասարդներ ստիպված են լինում կա՛մ

լքել համայնքը աշխատանք փնտրելու համար, կա՛մ ընդունել ցածր վարձատրվող աշխատանք:

Կան որոշ ծրագրեր և նախագծեր, որոնք ուղղված են երիտասարդներին աջակցությանը, սակայն դրանք հաճախ չեն բավարարում բոլոր կարիքները: Սոցիալական ապահովագրության մակարդակը նույնպես կարող է լինել սահմանափակ:

Ֆինանսական ռեսուրսների և աջակցության բացակայություն բիզնես սկսելու սկզբնական փուլում: Շատ երիտասարդներ չունեն կապիտալ իրենց գաղափարներն իրականացնելու համար, ինչպես նաև փորձ և մենթորություն, որը կարող է օգնել նրանց խուսափել սովորական սխալներից: Բացի այդ, վարչական խոչընդոտները և թույլտվություններ և լիցենզիաներ ստանալու դժվարությունները կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ նոր ձեռնարկատերերի համար:

**Տեխնոլոգիական հնարավորությունների պակաս**: Տեխնոլոգիական ենթակառուցվածքների և նորարարական հնարավորությունների պակասը խոչընդոտում է երիտասարդների տեխնոլոգիական հմտությունների զարգացմանը և նորարարական նախաձեռնությունների իրագործմանը:

Առկա է որակյալ մասնագետների պակաս և SS ոլորտում որակյալ կրթական ծրագրերի սահմանափակ հասանելիություն: Շատ երիտասարդներ, հատկապես գյուղական վայրերում, չունեն անհրաժեշտ կրթություն ստանալու կամ ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիության հնարավորություն: Բացի այդ, ենթակառուցվածքների բացակայությունը, ինչպիսիք են համատեղ աշխատանքային տարածքները և տեխնոլոգիական պարկերը, սահմանափակում են ստարտափների հնարավորությունները: Հենց ենթակառուցվածքների բացակայությունը հանդիսանում է նաև զբոսաշրջության մեջ երիտասարդների պասիվ ներգրավվածությանը: Զբոսաշրջության ոլորտում երիտասարդների շրջանում առկա է նաև մասնագիտական հմտությունների պակասի խնդիր, ինչպիսիք են օտար լեզուների իմացությունը, հյուրընկալության հմտությունները և զբոսաշրջային ծառայությունների կառավարման հմտությունները:
Ենթակառուցվածքների բացակայությունը, ինչպիսիք են սպորտային դաշտերը, ֆիթնես կենտրոնները և որակյալ բժշկական ծառայությունների հասանելիությունը:

**Բնապահպանական Մարտահրավերներ:** Օդի և ջրի աղտոտվածությունը իր հետքն է թողել հանրային առողջության վրա: Առկա է ռեսուրսների և բնապահպանական լայնածավալ ծրագրերի ֆինանսավորման բացակայություն: Շատ նախաձեռնություններ մնում են տեղական համայնքի մակարդակում՝ չստանալով համապատասխան աջակցություն կառավարության կողմից: Բացի այդ, բնակչության մի մասի մոտ առկա է ցածր տեղեկացվածության խնդիր, ինչը պահանջում է մշտական աշխատանք բնապահպանական մշակույթի բարելավման ուղղությամբ:

Այս խնդիրների համադրությունը Ալավերդի խոշորացված համայնքի երիտասարդներին դարձնում է ավելի խոցելի, ինչը պահանջում է պետական և հասարակական կազմակերպությունների հատուկ ուշադրություն և աջակցություն:

## 1. ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2025-2029

Ալավերդի խոշորացված համայնքի երիտասարդական քաղաքականությունն ուժի մեջ կմտնի 2025 թվականի հունվարի 1-ից և կգործի 5 տարի ժամկետով:

## 2. ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**ՆՊԱՏԱԿԸ**

Տեղական երիտասարդական քաղաքականության նպատակն է ստեղծել դինամիկ և զարգացած համայնք, որտեղ յուրաքանչյուր երիտասարդ ունի հնարավորություն զարգացնելու իր ներուժը և մասնակցելու համայնքային կյանքին: Մենք ձգտում ենք կառուցել համայնք, որտեղ երիտասարդները դառնում են առաջնորդներ և ակտիվ մասնակիցներ համայնքային նախաձեռնությունների մեջ:

**ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմում ներդնել երիտասարդական աշխատողի հաստիք կամ որևէ աշխատակցի պաշտոնի նկարագրով սահմանել գործառույթներ՝ առնվազն 25%-ծանրաբեռնվածությամբ:

2. Խթանել երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային և հասարակական կյանքում՝ ապահովելով նրանց քաղաքացիական կրթությունը, հայրենասիրական դաստիարակությունը և կամավորության զարգացման հնարավորությունները:

3. Խթանել առողջ ապրելակերպը և բնության պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագիծը երիտասարդների և հասարակության շրջանում:

4. Խրախուսել երիտասարդների ոչ ֆորմալ կրթությունը, աջակցել փափուկ հմտությունների (այդ թվում մեդիագրագիտության) զարգացմանը և մասնագիտական կողմնորոշմանը:

5. Խթանել երիտասարդների ձեռնարկատիրական մտածողությունը և ձեռնարկատիրական նախաձեռնությունները, մասնավորապես ներգրավվածությունը զբոսաշրջության և SS ոլորտներում:

6. Խթանել երիտասարդների ստեղծարարությունը, ինքնադրսևորումը, հոգևոր զարգացումը՝ ապահովելով իմաստալից և մշակութային ժամանցի հնարավորությունը:

7. Նպաստել երիտասարդների իրազեկվածության և պատրաստվածության բարձրացմանը արտակարգ իրավիճակների դեպքում:

## 3. ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ալավերդի խոշորացված համայնքի երիտասարդական տեղական քաղաքականությունը և ծրագրերը հիմնված են հետևյալ սկզբունքների և մոտեցումների վրա.

**Մասնակցություն և ներգրավվածություն**. Երիտասարդներն ունենալու են լիարժեք և իմաստալից մասնակցություն տեղական մակարդակում հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման և քաղաքականության իրականացման գործընթացներում:

**Երիտասարդների շարժունակություն**. Գյուղական բնակավայրերում շարժունակությունը եւ տրանսպորտը հիմնարար անհրաժեշտություն են կյանքի որակի ապահովման համար: Ալավերդի խոշորացված համայնքի հատկապես գյուղական բնակավայրերում մեծ խնդիր է միջբնակավայրային տրանսպորտը, ինչը հանգեցնում է տվյալ գյուղական բնակավայրերի երիտասարդների մեկուսացմանը:

**Թափանցիկություն և պատասխանատվություն**. Քաղաքականության մշակումը, իրականացումը և գնահատումը իրականացվելու է թափանցիկ կերպով՝ ապահովելով հանրային մասնակցություն և հաշվետվողականություն:

**Հավասարություն և ներառականություն**. Համայնքային ծրագրերը ապահովելու են հավասար հնարավորություններ բոլոր երիտասարդների համար՝ անկախ սոցիալական, տնտեսական, բնակության, սեռի, տարիքի, կրոնական պատկանելիության կամ այլ տարբերակիչներից, այդ թվում առցանց գործիքների կիրառմամբ:

**Փաստահենք քաղաքականություն**. երիտասարդական քաղաքականության և ծրագրերի մշակումն ու իրականացումը հիմնված են հուսալի, այժմեական ուսումնասիրության, մոնիթորինգի, գնահատումների և այլ փաստերի վրա:

**Երիտասարդակենտրոնություն**. Երիտասարդական քաղաքականությունը ուղղված է լինելու երիտասարդների կարիքների, նպատակների և հետաքրքրությունների բավարարմանը:

**Շարունակականություն**. երիտասարդական քաղաքականությունը ապահովելու է երկարաժամկետ և կայուն զարգացումը՝ հաշվի առնելով երիտասարդների փոփոխվող կարիքները:

**Ստեղծարարություն**. Երիտասարդական քաղաքականությունը խրախուսելու է նորարարական մոտեցումները և ստեղծարարությունը:

**Հայրենաճանաչություն**. Քաղաքականությունը խրախուսելու է երիտասարդներին ճանաչել և սիրել իրենց համայնքը և հայրենիքը, նրա մշակույթը և պատմությունը:

**Համագործակցություն**. Երիտասարդական քաղաքականությունը խթանելու է երիտասարդների և համայնքի տարբեր հատվածների միջև սերտ համագործակցությունը՝ արդյունավետ արդյունքների հասնելու և համայնքի զարգացմանը նպաստելու համար:

## 4. ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Սույն փաստաթղթի շրջանակներում երիտասարդական քաղաքականության սուբյեկտներն են.

**Երիտասարդ**՝ 13-ից 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձ:

**Աշակերտական, ուսանողական, երիտասարդական խորհուրդ**՝ կրթական հաստատության, տեղական ինքնակառավարման կամ տարածքային կառավարման մարմնի կառուցվածքում (մարզպետարաններում) խորհրդատվական կամ որոշումների կայացմանը մասնակցող մարմին, որը, համաձայն իր կանոնադրության, ապահովում է երիտասարդների ինստիտուցիոնալ մասնակցությունը տվյալ մարմնի գործունեության շրջանակներում որոշումների կայացման գործընթացներին:

**Երիտասարդ ընտանիք**՝ ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը 18-ից 35 տարեկան է, և ամուսինների գումարային տարիքը չի գերազանցում 70-ը, կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 35-ը:

**Երիտասարդական աշխատող**՝ երիտասարդների հետ աշխատող մասնագետ, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք, այն է՝ կրթական, մշակութային, բնապահպանական կամ սոցիալական այլ նշանակության խմբային կամ անհատական աշխատանք երիտասարդների համար, նրանց հետ և/կամ նրանց կողմից, հիմնված ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության և երիտասարդների

կամավոր մասնակցության վրա: Երիտասարդական աշխատանքն իր բնույթով երիտասարդների ներուժի բացահայտմանը, իրացմանը, հանրային կյանքի տարբեր ոլորտներում և մակարդակներում կայացվող որոշումներին ակտիվ մասնակցությանը և ներառմանը միտված սոցիալական գործունեություն է:

**Տեղական ինքնակառավարման մարմին՝** հիմնական պատասխանատուն է երիտասարդական քաղաքականության մշակման, հաստատման և իրականացնելու համար: Կոորդինացնում է նաև տեղական բյուջեի ռեսուրսները նախագծերի և ծրագրերի համար:

**Կրթական հաստատություններ՝** դպրոցներ, քոլեջներ, բուհեր, մշակույթի կենտրոններ և այլ ուսումնական հաստատություններ, որոնք ապահովում են երիտասարդների կրթությունը, զարգացումը՝ այդ թվում նաև մշակութային, հոգևոր և մասնագիտական:

**Տեղական ձեռնարկություններ և բիզնեսներ՝** մարմիններ, որոնք մասնակցում են երիտասարդների զբաղվածության և ձեռներեցության խթանմանը:

**Առողջապահական և Սոցիալական ծառայություններ՝** ապահովում են առողջապահական, հոգեբանական և սոցիալական աջակցություն երիտասարդներին՝ նպաստելով նրանց ամուր և առողջ համայնքային կյանքին:

**Տեղական հասարակություն և շահագրգիռ կողմեր՝** համայնքի անդամներ, առավել խոցելի խմբեր, ովքեր մասնակցելու են երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին, ինչպես նաև դառնան դրանց իրական շահառուները:

**Տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններ՝** միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ, որոնք նպաստում են երիտասարդների մասնակցությանը տարբեր ծրագրերում և նախաձեռնություններում՝ հասարակական ու սոցիալական զարգացումների խթանման համար:

## 5. ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Երիտասարդական քաղաքականության իրականացման համար սուբյեկտները հատկացնում են ֆինանսական, նյութական կամ մարդկային ռեսուրսներ (կամավորներ):

Ֆինանսավորման կայունությունն ապահովվում է ողջամիտ և արդար հատկացումների միջոցով՝ միտված երիտասարդական ծրագրերի շարունակականությանը և արդյունավետությանը:

Տեղական ինքնակառավարման մարմինը, որպես տեղական երիտասարդական քաղաքականության հիմնական պատասխանատու, վերջինիս իրականացման համար յուրաքանչյուր տարի կապահովի համայնքի բյուջեի ծախսերի առնվազն 1 %-ի չափով հատկացումներ: :

## 6. ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Երիտասարդական քաղաքականությունը իրականացվում է Տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) և Համայնքի ղեկավարին առնթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) հետ համատեղ մշակված գործողությունների ծրագրին համապատասխան: Գործողությունների ծրագիրը մշակելու համար ձևավորվում է աշխատանքային խումբ՝ ՏԻՄ-ի, ԵԽ և համայնքի շահառու երիտասարդների ներգրավմամբ: Գործողությունների ծրագրով յուրաքանչյուր տարվա համար սահմանվում են չափելի վերջնարդյունքներ, որոնք ուղղված են սույն փաստաթղթում նշված խնդիրների և մարտահրավերների լուծմանը: Յուրաքանչյուր վերջնարդյունքին ուղղված գործողություններից յուրաքանչյուրի դիմաց նշվում է դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսը (դրամական և/կամ ոչ դրամական արտահայտմամբ), դրա իրականացման պատասխանատուն, և արդյունքի վավերության չափման միջոցները՝ մոնիտորինգի իրականացման համար:

ԵԽ-ն ձևավորվում է ավագանու կողմից տեղական երիտասարդական քաղաքականության հաստատումից հետո երկամսյա ժամկետում:
ԵԽ-ն առաջին տարում, որպես անցումային շրջան, կազմվում է երիտասարդական քաղաքականությունը նախաձեռնող և մշակող խմբի 7 անդամներից: Խորհուրդը ՏԻՄ-ի հետ համատեղ մշակում է.

- ԵԽ ձևավորման ընթացակարգը, կազմը և գործունեության շրջանակը և ժամկետները
- Հայեցակարգի խնդիրներից բխող առաջիկա մեկ տարվա գործողությունների պլանը
- Մշտադիտարկում և գնահատում իրականացնող խորհրդի ձևավորման ընթացակարգը, կազմը և գործառույթները:

ԵԽ-ն կգործի մինչև 2025թ դեկտեմբերի 31-ը և հաջորդիվ կառավարման խորհուրդը կձևավորվի արդեն իսկ մշակված ընթացակարգով:

Սույն քաղաքականության մոնիթորինգը և գնահատումն իրականացվում ըան է մասնակցային եղանակով՝ ներգրավելով երիտասարդներին, կրթական

հաստատություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին: Սա կներառի հանրային քննարկումներ, ֆոկուս խմբային քննարկումներ և հարցումներ, որոնց միջոցով երիտասարդները և համայնքի անդամները կարող են արտահայտել իրենց կարծիքները, առաջարկությունները և գնահատականները:

Քաղաքականության գնահատումը իրականացվում է կիսամյակային, տարեկան և հնգամյա պարբերականությամբ՝ բոլոր շահագրգիռ կողմերի համար ապահովելով գնահատող խմբի կազմում ներգրավվելու հավասար հնարավորությունները և բացառելով շահերի բախումը:

**Կիսամյակային մոնիթորինգ**: Մոնիթորինգի և գնահատման տվյալների հիման վրա, մոնիթորինգային խումբը կկազմի կիսամյակային զեկույցներ, որոնք կներկայացվեն համայնքի շահագրգիռ կողմերին: Այս զեկույցները կվերլուծեն ծրագրերի ընթացքը, բացահայտված խնդիրները և կտրամադրեն առաջարկություններ քաղաքականության տվյալ տարվա գործողությունների պլանի բարելավման համար:

**Տարեկան համապարփակ գնահատում:** Ամեն տարի կկազմակերպվի ծրագրերի համապարփակ գնահատում, որտեղ կվերլուծվեն նախորդ տարվա ընթացքում իրականացված գործողությունները, արդյունքները և դրանց ազդեցությունը համայնքի երիտասարդների վրա: Այս գնահատումը կներառի նաև շահագրգիռ կողմերի մասնակցությունը՝ ապահովելով, որ գնահատման արդյունքները ներկայացնեն համայնքի լայն շրջանակի տեսակետները: Գնահատման արդյունքները կվերլուծվեն և կտրամադրեն առաջարկություններ քաղաքականության բարելավման համար:

**Հնգամյա ամփոփ գնահատում**: Քաղաքականության իրականացման հինգերորդ տարում կկազմակերպվի վերջնական գնահատում, որի նպատակն է ամփոփել ձեռքբերումները, գնահատել ծրագրերի երկարաժամկետ ազդեցությունը և ձևավորել նոր հնգամյա քաղաքականության առաջարկներ: Գնահատման արդյունքները կհրապարակվեն և հասանելի կլինեն համայնքի բոլոր անդամներին՝ ապահովելով բաց և թափանցիկ գործընթաց:

Հավելված 1.

- ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ալավերդի խոշորացված համայնքի երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մշակումը հիմնված է մի շարք մասնակցային գործընթացների վրա: Այս փաստաթուղթը մշակելու անհրաժեշտությունը բխում է այն կարևորությունից, որ երիտասարդները ակտիվ դեր ունենան համայնքային կյանքում և մասնակցեն որոշումների կայացման գործընթացներին: Երիտասարդների կարիքները հաճախ անտեսված են մնում համայնքային ծրագրերում, ուստի այս քաղաքականությունը կոչված է ապահովելու, որ երիտասարդների ձայնը լսելի լինի, և նրանց կարիքներն ու նախաձեռնությունները համապատասխան ուշադրության արժանանան՝ համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերում:

1. **Աշխատանքային խմբի ստեղծում**: Ձևավորվել է աշխատանքային խումբ, որը նախաձեռնել է Ալավերդի խոշորացված համայնքի երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մշակման աշխատանքները:

2. **Կարիքների գնահատման գործիքի մշակում և նախապատրաստում**: **Փորձագետների** և աշխատանքային խմբի կողմից գործիք է մշակվել՝ երիտասարդների կարիքների գնահատման համար: Գործիքի հիման վրա վերապատրաստում է անցել 15 երիտասարդ՝ ֆոկուս-խմբային քննարկումներ անցկացնելու հմտություններով զարգացման համար:

3. **Ֆոկուս-խմբային քննարկումներ**: Ալավերդի համայնքի բնակավայրերում **երիտասարդների** կողմից իրականացվել է 14 ֆոկուս-խմբային քննարկում, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 169 մարդ: Ֆոկուս-խմբային քննարկումներն իրականացվել են 4-ը բնակավայրերի 14-30 տարեկան երիտասարդների խմբերի, 2-ը՝ ՏԻՄ ներկայացուցիչների, 2-ը՝ հանրակրթական դպրոցների մանկավարժական անձնակազմի, 2-ը՝ միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտությունների մասնագետների, կրթական հաստատությունների, 2-ը՝ երիտասարդների ծնողների, 1-ը՝ սոցիալական ծառայությունների մասնագետների, 1-ը՝ տեղական ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

4. **Տվյալների և իրավական փաստաթղթերի վերլուծություն**: Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները վերլուծվել են, և սահմանվել են քաղաքականության առաջնահերթությունները: Իրականացվել է նաև Ազգային և միջազգային իրավական փաստաթղթերի, այդ թվում՝ ՏԻՄ օրենքի, Տեղական եւ մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիան, երիտասարդական քաղաքականության մասին օրենքի նախագիծը, համայնքային զարգացման ծրագրերի վերլուծություն:

5. **Քննարկում և համայնքային ֆորում**: Կազմակերպվել է համայնքային ֆորում՝ «Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը» թեմայով՝ երիտասարդների, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանի, կրթական հաստատությունների, սոցիալական ծառայության, տեղական ՀԿ-ների, համայնքի ակտիվ բնակիչների, երիտասարդների ծնողների մասնակցությամբ: Ֆորումի ընթացքում քննարկվել է երիտասարդների իմաստալից մասնակցության կարևորությունը, մարտահրավերները և հնարավորությունները: Ֆորումի մասնակիցների կողմից քննարկվել են նաև քաղաքականության հայեցակարգի նպատակն ու խնդիրները, սկզբունքները, թեմատիկ ուղղությունները և գործողությունների պլանը:

6. **Քաղաքականության մշակում**: Աշխատանքային խումբը՝ հավաքագրելով և **վերլուծելով** բոլորի փուլերից ստացված տեղեկատվությունը, փորձագետների և ՏԻՄ ներկայացուցիչների ներգրավմամբ, մշակել է քաղաքականության նախագիծը և այն ներկայացրել ու քննարկել է տարբեր շահագրգիռ կողմերի հետ: